ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 հունվարի 2024 թվականի N 54 - Ն

ՋԵՐՄՈՑԱՅԻՆ ԳԱԶԵՐԻ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Մթնոլորտային օդի պահպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 666-Լ որոշման N 1 հավելվածի 5-րդ մասի «Կլիմայի փոփոխությանն առնչվող գործողությունները» բաժնի 121-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել ջերմոցային գազերի արտանետումների գույքագրման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ սույն որոշման հավելվածով նշված ոլորտների ջերմոցային գազերի արտանետումների գույքագրման համար անհրաժեշտ տեղեկատվությունը տրամադրվում է՝ համաձայն հավելվածով սահմանված ձևերի:

3. Ջերմոցային գազերի արտանետումների գույքագրման պետական լիազոր մարմին սահմանել Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարությունը (այսուհետ՝ լիազոր մարմին):

4. Լիազոր մարմնին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո վեցամսյա ժամկետում՝

1) ապահովել ջերմոցային գազերի արտանետումների գույքագրման էլեկտրոնային շտեմարանի գործարկումը.

2) հաստատել որակի ապահովման ընդհանուր ծրագիրը և դրանից բխող տարեկան պլանը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

12.01.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ